


13143



891.99

5-25

2003

891.99

428 Ա-25 Կ  
145-84 Ա Զ Գ Ա Յ Ի Ն

# ԴԻՒՅԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## (Ասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԾՈՒԱՅ

## **ՈՒՍՏՈՒՆՔ ԵՒ ՀԱԹԵՐՑՄՈՒՆՔ**

Համար, կարգադրութեանց փրկելու համար, 1881 թ.

1002

Հայք հարստահարութենէ փրկելու համար ,  
իրենց ասնցնել տալ պէտք է զիրենք . Հայք  
անտարերութեան գեւեց մնի ափէն ետ  
դարձնելու համար՝ իրենց հայրենական բար-  
բառով կանչելու է զիրենք: Մասեաց սրինգ-  
ները հնչեցնելու է իրենց ականջին:



ԵՐԿՐՈՐԴ տիպ

# ԹԻԳՎԱ

1881

Digitized by srujanika@gmail.com

ଆମେ କିମ୍ବା କିମ୍ବା କିମ୍ବା କିମ୍ବା କିମ୍ବା

Дозволено Цензурою. Тифлисъ. 14 Сентября 1881 г.

առ մինչև այս քեզ մաս բարձրացաւ առաջ մայնամեջան ըստից՝ դատակ ուղանեար բայց բանակ պահանջ է այս բայց իսկուզ մասնաւ ըստից է այս բայց պահանջ

6403

## ԱՐԴՅՈՒՆՎԱՐ

Тип. М. Вартаняна и К°, Троицк. пер., д. № 11.

182 K

այժմ՝ ըմբորտե՛ զգօք չէ նարձև մի մաֆիշավ դիմ  
համբաւացա՛ զդուս նմանուն) զբան զմ՛ լազմի փրս զմի  
ուժրմի և զմծի զրմէ ուսչ մակա՞ նարձև սկս (միջաշաղ  
ըմբակա՞ իշ բաշտայ մաֆիշավ Զմ մասնաւրդե՞ ծնն սկս զս  
զիմայրու նմէ ուր գուայ ծնն իմ » զառու ու զգուայ  
նամաստայ ։ նամուսարացմի Չրո ու զգը ու ըմբրս սկս  
։ զմեմ բառան թճ զգայրու արթզ նի ։ Նմ  
։ զմ մզմէ զու արտմ ։ Ա Զ Գ Ա Յ Ի Ն  
Պ Ր Ի Ց Ա Զ Ա Ր Հ Ա Ր Հ

Ս. Կարապետը Հայերի համար փառք ու պարձանք է,  
զօրաւոր եւ հարուստ է։ Նաև իշխաններ եւ աւազակներ  
նախանձել են Հայերին եւ ուղեցել են կորզել նոցա ձեռ-  
քից Ս. Կարապետը։ Որովհետեւ նա ունի շատ հարատու-  
թիւն եւ կալուածք, անտառ ու դաշտ, ուխար իւ մաս:

Բաղդադ քաղաքը առաջ շատ զբեղ եւ մեծ էր, նորա խալիքան զօրեղ եւ կտրիճ մարդ էր: Սա զօրք ժողովեց եւ եկաւ մեր սուրբ Կարապետի վերայ, շատերին գերի տարաւ եւ մեր ազգի շատ նուազեցրեա:

Գերիների մեջ լինում է մի շատ սիրուն աղջիկ։ Բազդագի խալիթան հաւանում է նորան եւ իրեան կին է առնում։ Մէկ ժամանակից յետոյ երկու տղայ է լինում այդ կնոջից։ մէկի անունը գնում են Արամէլիք եւ միւսին՝ Սանասար։ Սոցա հայրը կռապաշտ էր, իսկ մայրը խաչապաշտ, որովհետեւ մայրը մեր ազգիցն էր։

本  
志

Այդ խալիքան մի անգամ էլ զօրք ժողովեց՝ եկաւ մեր ազգի վերայ: Մեր ազգը (մեռնեմ սուրբ Կարապետի հրաշքին) այս անգամ նորան շատ նեղը լծեց: Այնպէս որ այս մեծ նեղութեան մէջ խալիքան կանչեց իւրեանց կուռքը եւ ասաց. «Ով մեծ կուռք, որ ինձ ազատիր այս ազգից, եւ երբ ես ողջ վերադառնամ, խոստանում եմ՝ իմ երկու տղայքը քեզ մատաղ անել»:

Նոցա մայրը քնեց, երազ տեսաւ: Տեսաւ որ ինքն երկու ճրագ ունէր. այդ ճրագները իւր թէ մէկ ուղում էին հանգչել, մէկ էլ դարձեալ սկսում էին լոյս տալ: Առաւոտուն վեր կացաւ եւ միտք բերելով՝ պատմեց երկու տղայոց երազի եղելութիւնն եւ ասաց. «Այս գիշեր երազում Ե. Կարապետն ինձ երեւաց, ասաց թէ ձեր հայրն ընկել է նեղութեան մէջ եւ ձեզ մատաղ է խոստացել իւր կուռքերին: Ուրեմն երբ որ գայ՝ ձեզ պիտի մատաղ անէ: Գնացէք, ձեր ճարը գտէք»:

\* \*

Երկու եղբայրները կանչեցին իւրեանց Աստծուն, վեր կացան առան իւրեանց պաշարը, լցրին պարկը եւ ճանապարհ ընկան: Ընկան ճանապարհ եւ շատ պլոտեցին տուին դուրս եկան օտար երկիր:

Գնացին հասան մի նեղ ճօր եւ տեսան, որ մի գետ է գալիս անցնում. միւս կողմից մի առու էր գալիս մըս նում այդ գետի մէջ, կտրում էր նորան եւ ուժով շերտ տում էր մինչեւ մէջ տեղը, եւ ապա խառնվում նորա հետ ու գնում: Սանասարը շատ զարմացաւ այս բանի վերայ եւ Արամէլիքին ասաց. «Ով որ այդ ջրի ակը գտնէ եւ իւր տունը այդ ջրի վերայ շինէ, նորան էթէ զաւակ լինի՝ այդպէս ուժեղ կրինի»:

Վեր կացան երկու եղբարք, առուն բոնեցին ու գնացին: Գնացին եւ աղբիւրը գտան: Այդ աղբիւրի ջուրը մի

մատի հաստութեամբ ջուր է. գալիս է բոլորովին կը բում է իւր տակի առուն, եւ յետոյ մի անգամ էլ դառնայով՝ խառնվում է նորա մէջ:

Նստում են սոքա այդ աղբիւրի գլխին եւ իւրեանց բերդի հիմքը ձգում:

Սանասար որսի էր գնում եւ Արամէլիք աշխատում էր բերդի շինութեան վերայ: Այդ տեղի մօտակայքում գեռ ուրիշ բնակութիւն չկար:

Տասն կամ քսան օր բանեցին այդ ամրոցի վերայ: Աշխատանք էր, որ նոքա անդադար կրում էին: Արամէլիք մի օր գնաց տեսաւ, \* օր Սանասարը յոգնած պառկել էր եւ վրան քուն էր եկել: Արիւնոտ որսերը հէնց առանց եփելու թափել էր գետին ու քնել: Նատ կսկաց նորա դրութեան վերայ եւ ասաց. «Եղայր, վեր կաց գնանք մի տէր գտնենք. մինչեւ Երբ պէտք է մենք այս տեղ մնանք եւ անալի միս ուտենք: Աստուած որ տուել էր, մեզ մեր հօր պալատն ու ամրոցը կուտար»:

\* \*

Երկուսն էլ հեծան ձիերը եւ դիմեցին Արգրում նրա տող իշխանի մօտ: Գնացին այդ իշխանին գլուխ տուեցին: Ահագին ու ուղածիդ պէս ակնածելի մարդիկ են այդ երկու եղբայրները:

Արգրում նստող ամիրան շատ հաւանեց դոցա, հարցրեց նոցա ազգն սւ հայրենիք եւ ասաց. «Դուք ի՞նչ մարդ էք»:

— Մենք Բաղդադի խալիքի որդիքն ենք, ասաց Ասասար:

«Հայ, Հայ, Հայ, ասաց ամիրան եւ դոցա առաջ թափ տուեց իւր փողպատը, մենք դոցա մեռելներից էինք վախենում, հիմի կենդանիներին պատահեցանք: Ուր կ'երթաք, գնացէք, մենք չենք կարող ձեզ տէր լինել»:

Այն տեղից յետ դարձան եւ քշեցին գնացին Ղար-  
սում նստող ամիրայի մօտ. նա էլ այդպէս խորշեցաւ  
նոցանից: Եւ նոքա այդ տեղից էլ դառնալով մտքները  
գրին որ այս անգամ կապուտկողի թագաւորին գնան:

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Եղբայր, մենք այդ  
հօրիցն ենք փախչում, բայց ինչու նորա անունն ենք  
դրել մեր վերայ այսուհետեւ ուս որ գնանք ով որ հարց  
նէ, պէտք է ասենք, թէ մենք բան չունինք՝ ոչ հայր, ոչ  
մայր, ոչ տուն, ոչ հայրենիք. գուցէ մարդիկ մեզ էլ տէր  
դառնան»:

Եթե ո՞ր Կապուտկողի թագաւորը դոցա տեսաւ, շատ  
հաւանեց: Աբամելիքը գլուխ խոնարհեցրեց և կանգնեց  
նորա առաջին. թագաւորը շատ սիրեց նորանի, եւ հարց-  
ըեց դոցանից. «Որդինք, դուք ո՞րտեղից էք ի՞նչ ունիք,  
ի՞նչ ունիք»:

—Ո՞չ, ոչինչ չունինք, ասացին, ոչ հայրն ոչ մայր  
եւ ոչինչ։

Վերջապէս Սանասարը կարգուեց չիբուխչիւ իսկ Աբա-  
մէլիքը խահուէչի. Եւ այսպէս տոքա մի ժամանակ մնա-  
ցին, եւ Էլի շատ պէտք է մնային, եթէ ուրիշ միտք չու-  
նենային իւրեանց գլխում:

Մի որ Սանասարն ասաց Աքամբէլիքին. «Մենք որ այս-  
պէս ծառայենք, երբ պէտք է հասնենք մեր նպատակին:  
Այնքան աշխատեցինք ու մեր շնչը կիսակատար մնաց:  
Մեզ տէր է պէտք, որ ժողովուրդ տայ մեզ եւ տիրանայ  
Առաւօտուն ոչ դու խաչուէ եփիր, ոչ ես ջիրուխ պատ-  
րաստեմ եւ տամ. եւ չգնանք իշխանին երեւալու»:

Թագաւորը քնի մէջ իմացաւ: Եւ յետոյ ոչ մէկը եւ բեւեցաւ, ոչ միւսը. վերջապէս կանչեց այդ մարդոց, գնաց եկաւ թագաւորն ու ասաց. «Որդիք, առաջ ես մի՞թէ չը

Հարցուցիւ, թէ ի՞նչ ունիք, հայր մայր, եւ դուք պատասխանեցիք թէ բան չունինք: Դուք ձեր միտքը ի՞նչի վերայ եք դրել: Պատասխանեցին. «Թագաւորն ապրած կենայ, ճշշամարիտ է՝ հայր մայր չունինք: բայց եթէ քեզանից ծածկենք, Ասուծուց ի՞նչ ծածկենք. Մի ամայլ տեղ չէնք ենք սկսել փոքր ինչ վերան աշխատել ենք եւ թողել եկել այս տեսակ աղքիւրի վերայ է»: ու սկսան պատմել, թէ ի՞նչ տեսակ է: Ճար ամայլ աշխատայ ցընըրա զո զոյ

Թագաւորի միբոը գթաց դոցա վերայ եւ ասաց.  
«Որդիք, որովհետեւ այդպէս է, առաւօտը ձեզ մի քանի  
տուն կուտամ», եւ գնացէք ձեր բերդը շինեցէք». Եւ  
տուեց դոցա քառասուն տուն։ Բայց ի՞նչ տուն. հէյ...  
ամեն մէկին մի էշ ամենայն բարիքով բարձած եւ մէկ էլ  
ճախրակ հետր դրեկ»:

**Առաւոտը վեր կացան, ժողովեցին, կապեցին, բարձեցին իւրեանց աները, եւ ճանապարհ ընկան, գնացին, ինւանեցան իւրեանց աղբիւրի եւ իւրեանց հիման վերայ:**

Սանասարն ասաց Աքամէլիքին. «Առաջ այս բերդը շինենք, թէ այս ովորմելի աղքատների բնակարանները»։ Աքամէլիքը պատասխանեց. «Առաջ շինենք դոցմ բները, ու նոր շինենք մեր բերդը. այդ խեղճերը չեն կարող արեւի տակ կենալ»։

Եւ սկսան շինութիւնները. Աբամէլիք այնքան զօրեղ  
էր որ տասը տան տեղ էր փորում եւ տասը տուն շի-  
նում, այն միւսն էլ փայտերն էր բերում. եւ այսպէտ  
բանուածքը երկուսով էին շինում. Երկու եղայրները չորս  
օրուայ մէջ քառասուն բնակութիւն շինեցին աւարտեցին.  
Ապա ակտեցին կիսատ թողած ըերգը շինել եւ վերջացու-  
ցին. Այնքան ուժեղ էին, որ քարէ սեան քարէ սիւն զար-

կեցին։ Կամարները քաշեցին եւ բերդը աւարտեցին։ Ասաց։ «Մենք քո որդիքն ենք, մեր բերդը շինել եւ աւարտել ենք։ Հիմի եկել ենք քեզ մօա եւ խնդրում ենք, որ գաս եւ մեր բերդին անուն դնես»։ Ան զայ և այսպէս Թագաւորը շատ միրեց եւ պատուեց Աբամելիքին եւ ասաց։ «Լաւ է որ ինձ չէք մոռացելու։ Եւ ելաւ իւր աղջիկը Աբամելիքին առուեց եւ որդեգրեց նորան։ Երբ որ աղջիկը պսակեցին, ելան թագավառը, աղջիկն ու տղան եւ նոցա հետ էլ քեռի Թորոսը, ձի հեծան եւ գնացին։ Նոցա հետն էլ շատ գօրք ու ժողովուրդ՝ տարան շատ զարդ ու պարգեներ, եւ մեծ հանդէս պիտի կատարէին։ Աբամելիքը նոցա առաջնորդեց եւ գնացին հասան բերդի տեղը։ Աբամելիքը գլուխ տուեց թագաւորին եւ ասաց։ «Տէ՛ր, քո ոտիգ տակն է բերդը»։ Թագաւորը ուրախացաւ, հրամայեց դրօշակները բանալ, զարդարուել փող կիցել, Թմբուկ հարկանել պարգեներ հանել, եւ մեծ հանդիսով բերդը մտնելու ըստայի մըրձ Երբ որ մօտեցան՝ յանկարծ թագաւորն այնպիսի փառաւոր քեզ բերդ տեսաւ, որ հիացած մնաց Զարմացաւ, բայց շուտ էլ բարկացաւ եւ այն տեղից ձիու գլուխը դարձրեց, որ պիտի յեմ գնարի եւ ասաց։ «Դուք ձեր բերդին անուն գրել էք, վերջացուցել էք, հիմի դիտմամբ կանչել էք ինձ, որ փորձէք»։ «Թագաւորը ապած կենայ, ասաց Աբամելիքը, մէկ մենք, մէկ Աստուած գիտէն որ այդ բերդին անուն չենք դրել, մենք միայն բերդ շինեցինք կանդնեցրինք»։ «Ե, ապրիք, լաւ վարպետ ձեռք էք ունեցել, եւ որովհետեւ անուն չէք դրել, քարե սեան միւն էք ուստեւ, հրամայում եմ եւ դորա անունը պէտք է լինի Սեսմիւն, Սասուն»։ Հայոց բան հայոց յու միշտ յանձն մազմա

Մէկ ժամանակ մնացին այն տեղ, քեռի Թորոսին էլ գլուխ կարգեցին, եւ նա էլ այն տեղ մնաց թագաւորը դարձաւ իւր տեղը։ Աբամելիքը շատ կտրիճ մարդ էր։ Մշի վերեւովախնչ սարեր որ պատել գոտի են կազմել՝ այդ ամէնն էլ գրաւեց, էլ ոչ մէկ կողմը չը թողեց, միշտ ձի կը հեծնէր, իւր բերդի դռնից դուրս կուգար, եւ որքան ջին ու ջանավար տեսնէր՝ բոնում էր, տէր էր դառնում։ Մի օր էլ գնաց մինչեւ Մուսուլ եւ այն էլ գրաւեց։ այն տեղի թագաւորին սպանեց, առաւ նորա կինը, եւ մի որդի ունեցաւ, Եւ որովհետեւ իւր անունը Աբամելիք էր։ որդու անունը դրեցին Մալամելիք, Աբամելիքը նստեց Մուսուլ, եղաւ թագաւոր։ Դա այդ տեղ թող նստած մնայ։ Բ.

Սանասարը նստած էր Սասուն։ Իւր հօր կուռքերը չէին թողնում, որ այդ տեղ հանդիսու մնար, եւ ելաւ ճանապարհ ընկաւ ու գնաց Բաղդադ իւր հօր ու մօր մօտ։ Նորա հայրը լուսամտի առաջ նստած էր, տեսաւ որ իւր որդի Սանասարը գալիս է, ճանաչեց եւ ասաց. «Ե՛յ, մեռնեմ քեզ, մեծ կուռք, մեծ է զօրութիւնդ, որ քո մատաղը քաշեցիր բերիր. Երբ եւ իցէ միւսն էլ կը քաշես կը բերեմ»։ Խոկ մայրը, որովհետեւ քրիստոնեայ էր, նստաւ արտասուեց իւր որդոց վերայ։ Հայրն առաւ թուրն ու սուրը եւ գնաց. կանչեց Սանասարին եւ ասաց. «Որդի, արի գնանք երկրապագութիւն տուր մեծ, կուռքին որ քեզ մատաղ անեմ»։ Հայրիկ, ասաց տղան, քո մեծ կուռքը շատ մեծ զօրաւոր կուռք է.

գիշերն էլ չէր թողնում, որ մենք այն տեղ հանդիսա  
մնայինք. երբ եւ իցէ միւս մատաղն էլ կը քաջէ կը քերէ».

Առաւ տղային եւ մոտաւ կռատուն։ Տղան ասաց հօրն. «Հայրիկ՝ գիտես դու, որ երբ մենք գնացինք՝ մենք պստիկ էինք. մենք քո կուռքի զօրութիւնը չը գիտենք. դու խոնարհիր քո կուռքին երկրպագութիւն տուր, տեսնեմ ինչպէս ես անում. որ ես էլ պովորեմ»։

— Այսպէս որդեակա ասաց հայրն եւ խոնարհեցաւ երկրպագեց։ «Հայրիկ, ասաց տղան, տես քո կուռքն ինչ զօրաւոր էք. երբ որ դու խոնարհեցար՝ իմ աչքերը մժնեցան, չը տեսայ, թէ ինչպէս արեցիր»։ (Որովհետեւ արխալուխի կոճակները չարձակուեցան՝ այս առաջին մնացմ չհասաւ, որ զարկել էր)։ Եւ յետոյ աւելացրեց. «Հայրիկ, հայրիկ, մէկ անգամ էլ երկրպագիր, տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ անեմ»։

Եւ երբ որ հայրը կրկին խոնարհեցաւ, տղան ասաց: «Եա՛ հացն ու գինի, Ֆէր կեդանի», եւ մի գուրզ իջաւ, եւ իւր հայր խալիֆային եօթն գազ գետինն ի վայր էջեցրեց։ Ապա առաւ գուրզը եւ մտաւ կռքերի մէջ, բոլորն էլ ջարդեց, եւ առաւ արծաթներն ու լցրեց իւր արխալուխի փէշը, բերեց տուեց մօրը եւ ասաց. «Մամօ, դոցանից զարդեր շինել տուր քեզ համար»։ Մամօ կամ Մայրը խոնարհեցաւ, երկրպագութիւն արեց եւ ասաց. «Դոհանամ քեզանից երկնի եւ երկրի Ստեղծող, որ մեզ այս բարբարոսի ձեռքից աղատեցիր»։ Եւ բերեց Սանասարին պսակեց Եւ նստացրեց. հօր գահի վերայ։

Նա մնաց այն տեղ. Մենք գանք Աբամէլիքին։

Չիօծ լուսի բիշուաշն գոյ ցանուան իւր բանի խառայ միջուրուն զամ մնա լուսի քառ վիճակ Աբամէլիքը, որու Մուսուլ էրանստած, իւր զաւակ Մալամէլիքին թողեց իւր տեղը, ինքը գնաց, Սատոն. Այսպէս անցաւ մի միջոց մի ժամանակ. դորանից մի քանի որդիք ծնուեցան մէկի անունը դրեց՝ Ճնճղափրիկ, մեծ տղինը՝ Յանվէգի մէկինը՝ Զենով Ովան, մէկի անունն էլ՝ Խար Գուսան, ու ամենի պստիկինն էլ՝ Դաւիթ։

Այդ տղերանց մէջ Ճնճղափրիկն ու Յանվէգին ամենեւ ին բանի պէտք չէին. Խար Զէնով Ովանն այնպիսի ձայն ունէր, որ եօթը գոմշի կաշի ձգում էր արեւը չորացնում, նոցանով փաթաթվում էր, որպէս զի եթէ գոռայ՝ ինքը չը պատռուի եւ չը տրաքուի։

Խոր Գուսանը լաւ երգում էր եւ իւր խաղովաշխարհք էր գրաւում։

Բայց ամենից աւելի հնարաւորն ու շնորհալին Դաւիթն էր. նորա ուժը ոչ մէկ լեզուով չի պատմուի։

Այսպէս բաւական ժամանակ մնաց, ծերացաւ Աբամէլիքը. մի օր նաստաւ ինքն իրան մտածեց եւ ասաց. «Զորս կողմը ինձ թշնամի եղաւ. իմ անկմանից յետոյ էլ ով պիտի տիրութիւն անէ իմ որդոց. Թէ որ անէ՝ միայն Մալամէլիքը կարող է, թէ չէ ուրիշ մարդ չի կարող դէմ դնել իմ թշնամիներին»։

Ճանապարհ ընկաւ եւ գնաց Մալամէլիքին. Ծեր ժամանակն էր, ասաց. «Մալամէլիք որդիս, դու էլ իմ զաւակ ես. եթէ ես շուտ մեռնեմ, իմ որդիքս քեզ պահ կուտամ», եթէ դու շուտ մեռնես, ես խնամեմ քո որդոց եւ պահպանեմ»։ Դարձաւ եկաւ, մնաց իւր բերդը. Մահուան օրն եկաւ, մեռաւ. Մալամէլիքն եկաւ նորա որդոց տարաւ, ըստորում հօր պատուէրը չէր մոռացել։

\* \* \*

Իսկ Սասունը իւր տիրոջ մահուանից յետոյ եօթը տարի սուգ մնաց. ամէն նոր ծնուռզին խաղով իմաց կ'անձին Աբամէլիքի մահը, ամեն մեռնողին եթէ հոգելոյս ասէին՝ Աբամէլիքին էլ հետը կը յիշէին. ոչ հարասնիք ունէին, ոչ ուրախութիւն։

Քեռի Թորոսն էր վշտացած ամենից շատ, որ աշխարքը անտէր է մնացել եւ Աբամէլիքի ժառանգները այսքան ժամանակ գերիների պէս նատած են հեռու իրանից։ Երբ որ գեղացիք շատ սուգ արեցին, մի որ հաւաքուեցան եկան քեռի Թորոսի մօտ եւսասացին. «Քեռի Թորոս, մեր տղերը ալեւորեցան եւ մեր աղջկերքը պառաւեցան. թէ մեր եօթը տարի սուգ անելով մեր Աբամէլիքը կ'ողջանայ, մի եօթը տարի էլ աւելի պահենք՝ պատրաստ ենք»։

Քեռի Թորոսը հրաման տուեց գրկից—հարեւաններին եւ ասաց. «Պսակեցէք ձեր տղաներին ու աղջիկներին, սուգ պահելով ոչինչ չի լինի»։

Քեռի Թորոսն ու գեղացիք նստան գինեխում սարքեցին ու խրախճացին. Միայն քեռի Թորոսն էր անմիթար. նա կթխան ձեռն առաւ, մնաց սառած եւ սկսեց մտածել՝ ոչ խմում է եւ ոչ վեր է դնում; Թորոսի տղան հետքւց ձայն տուեց եւ ասաց. «Պազօ, դոքա Սասունի գժեր են. հիմա մի անպատիւ խօսք կ'ասեն քեզ, կամ խմիր, կամ դիր գետին ու գնա»։

Վեր առաւ հայրն ու տղին ասաց. «Հէ՛յ անպիտան որդի, ես այստեղ նստեմ կերուխում անեմ, Ամլամէլիքը գայ մեր երեխաներին տանի, Աբամէլիքի տղաներին քշէ տանի ես այս տեղ կերուխում անեմ։ Ամօթ չէ մեզ. հաց գինի ու Տէր կենդանի, քան այս կթխան աւելի խմած զինեմ. ելնեմ երթամ իմ երեխ աներին երեւամ».

\* \* \*

Քեռի Թորոսը Սասունից խփեց ու գնաց Մուսուլ, ինքը գլուխ տուեց, Մալամէլիքը գլուխ տուեց, ու նստան Թորոսն ասաց, «Ահա ես ու գումար գատապտան Ամոծու։ Իրաւ է, դու եւ Աբամէլիքը պայմանագիր էք եղել բայց գերին գին ունի, տիրոջ կը հասնի»։ այ մուսաքարտի Գնացին Աստծու դաստանան երեխաները Թորոսին վիճակուեցան։ Յանձնու զի ցի ցի հայունու զի աս ևայ Մալամէլիքի աշք շատ էր վախենում այդ տղաներից, ուստի քեռի Թորոսին ասաց. «Արի բեր այդ երեխաներին անցկացը անցնեն նորա թրի տակով եւ թողնենք երթանք»։ Միւս երկուսն էլ նոյնը ասացին. Բայց Դաւիթիմքը քար կտրուեցաւ եւ ասաց. «Սպանում է թող այսօր սպանէ, որ մարդիկ ասեն, թէ մի երեխայ է սպանել. ես նորա թրի տակով չեմ անցնի. այսպէս է անում, որ էգուց ես մեծանամ սուր չբարձրացնեմ իւր վերայ»։

Քեռի Թորոսը ահից գոցա ժողովեց միատեղ, որ տանի թրի տակով անց կացնէ. Դաւիթը ընդգիմացաւ կանգնեց եւ չի գնում թրի տակ. Քեռի Թորոսը բարկացած բռնեց Դաւիթի օձիքը եւ հրեց, որ անցնի թրի տակով. Դաւիթը չգնաց թրի տակով, այլ կշտով անցաւ, եւ իւր մեծ բութը ջարդու քարի վերայ քսուեցաւ. կրակ գուրս ելաւ նորանից. երբ որ Ամլամէլիքն այս նկատեց՝ ասաց. «Դա որ գեռ փոքր է՝ այսքան է, որ մեծանայ ի՞նչ կը լինի». Եթէ ինձ մի վնաս պատահի՝ դորանից կը լինի»։

Քեռի Թորոսը առաւ տղերանց եւ Սասուն եկաւ. Այ մենին պաշտօնի կարգեց, ինչպէս կը վայելէր. Յանձնուն ըերդի մէջ թագաւոր գրեց հօր տեղ, եւ Դաւիթին՝ որ ամենից պատիկն էր՝ հորթապահ արեց։

Հայութ կամ առ սահման Պետքանակ չաղցր վաճէ  
անառա առ շընու վայր զայդ Անպան պայուր զայդ  
աւծնիթաւիթն էր, որ մի դագանակ զարկելով՝ քառասուն  
հորթ էլ հետք գլորում էր Զօտ Հատ Սունէր, բայց հորթ  
թապահութիւն լաւ չսովորեց Առ նոյն ժամ մէր միզմէր  
Հիսուսի օր էլ քծեց հորթերին հանեց Խարի գլուխ, տես-  
սաւ որ հորթարածի մէկը իւր հորթերին անիծում է:  
Դաւիթն այս կողմից գնալով՝ ասաց. «Եյ մարդ, դու ինձ  
ես անիծում կաց գամ մի դագանակ տամ գլխիդաց որ  
սասանես»:

Իսկ նաև պատասխանեց Դաւթին. «Գլխիդարեւելու մեռնեմ». ես էլ քեզ պէտք գո հօր գիւղի հորթարածն եմ, ուստքա ռամկի հորթերն են»: Այս անդք գմբերով ու իր Նժեմի այդպէս է, ասաց Դաւիթը, արի եղբայրանանք միայն ես հորթատարի ճիշդ ժամանակը չգիտեմ, իմ հորթերն էլ գույ պահիլու երբ որ գնալու ժամանակ լինի, իմ առաջը քշիր, որ տանեմ»: Ճն ու բարձ զա նաև

Եւ այդ օրը ճիշդ ժամանակին հորթերն առաւտու  
եկաւ գիւղ։ Ուրախացաւ քեռի Թորոսն ու ասաց՝ «Որդի,  
ահա այդպէս ազքաբաց եղիր, ամենայն օր ժամանակին  
գնա ու արի»:

Գաւիթն ասաց. «Քեռի, այդ իմ շնորհքը չէր, ես մի եղբայր եմ բռնել, ամենայն օր պիտի պահէ իմ հորիթե. ըլլ, ես էլ պէտք է լսե տիրութիւն անեմ»:

Մի օր Դաւթի ընկերն ուշացաւ. Դաւթիթը շատ նեղացաւ: Դու մի ասա, այն տղայի գիւղում ցառման ժամ պատարագ էր, տղան էլ այդ պատճառով ուշացել էր: Եւ եղբ որ եկաւ՝ Դաւթին ասաց նորան. «Ի՞մ ձեռքիցս այս օր ի՞նչպէս պէտք է ազատուիս»:

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արեւիդ մեռնիմ; Մի նեղանարք: Ես քո ահիցդ էլ չմնացի մինչեւի վերջ. Եւ այն

\* \* Այս պար ընտեղ  
Դաւիթը զբեց կօպալը ուսի վերայ եւ գնաց: Գնաց  
մտաւ գիւղացւոց մէջ. տեսաւ որ հարիսէքը բոլոր հանել  
դրել են կալում եւ քաշանայք եկել օքնում են: Դաւիթը  
կօպալը ձգեց մի չորս կանթանոց լիքը պղնձի մէջ եւ ու-  
սի վերայ շալկեց: Զարմացան այդ տեղի ժողովուրդն ու  
քաշանաները: Նոցանից մէկը ասաց. «Սա մեր պղնձը  
տարաւ է»:

Քահանան ասաց. «Թէ Աստուած կը սիրէք, ձայն մի հանէք. դա Սասունի գծերիցն է. որ դառնայ մեզ ջարդ-ու փշուր կանէ. թող տանի՝ իւղ պալու ին ու տես»:

Իսկ Դաւիթը կերակրով լիքը պղինձը ուստին՝ ընկերին է բերում։ Տեսաւ ընկերը նստած լաց է լինում։

«ՀՅ, ՀՅ, ասաց զուարձանալով՝ գիտեմ ինչի ես լաց լինում: Ճաշդ բերել եմ աղ ու եղ չեմ բերել, նեղանում ես: Արի հիմա կեր ճաշդ, երեկոյին էլ վրէն աղ ու եղ կեր, էլ պակաս ոչինչ չես ունենայ:»

— Դաւիթ, ասաց տղան, զլիսիդ արեւիդ մեռնիմ. ես  
աղն ու եղը ի՞նչ կմ անում: Քառասուն տւաղակ դեւեր  
դուրս եկան մեր հսրթերը տարան գնացին:

«Դու այդ տեղ կաց, պատասխանեց Գաւիթը, այդ տեղի հորթերիդ նայիր. Ես գնամ մէկէլները դարձնեմ»:

\*  
Եւ ընկառ հորթերի ետեւն ու գնաց, հետքը բռնեց  
Եւ մի այրի դռան առաջ կանգնեց։ Այդ տեղ Դաւիթիթը

այնպէս պինդ գոռաց, որ միջի դեւերի վերայ սարսափ թափուեցաւ (ինչպէս որ Քրիստոսի ձայնն ընկաւ դժոխքի մէջ եւ սատանէքը սասանեցան): Այդ աւազակների մեծն երբ որ լսեց, ասաց. «Ա, այ մեզ դա Դաւիթն է Աբամէլիքի տղէն, ելեք գլուխ տօւեցէք եւ ծառայեցէք, որ մեզ չպանէ»:

Սէկ մէկ դուրս եկան,\* եւ Դաւիթն էլ մէկ մէկ կօ-  
պալ զարկեց, այնպէս որ քառասունի գլուխը թռցրեց,  
գիտակը թռղեց մնաց: Այդ քառասունի էլ ականջները կրտ-  
քեց եւ տարաւ այրի մօտ մի քարի տակ պահեց: Այրի  
դուռը կօպալով կրնկահան անելով՝ ներս մտաւ եւ տեսաւ,  
որ մի կոյտ ոսկի է, մի կոյտ արծաթ. աշխարհքի բա-  
րութիւնն ու հարստութիւնը այն տեղ էր: Քանի որ իւր  
հայրը մեռել է, եւ ինչ որ աւերութիւն են արել դռքա-  
բոլորն այդ տեղ էր լցրած:

Մի ուրիշ դուռ բաց արաւ եւ տեսաւ այն տեղ մի ձիու քուռակ կապած։ Ինքնիրան խօսեց եւ ասաց։ «Քեռի, այս գանձը բոլորը քեզ, բայց այս անասունն ինձ լինի. տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»։ Ինքը գարձեալ իւր գլխին պատասխանեց. «Որդի, գանձն էլ քեզ, անասունն էլ քեզ. ես ի՞նչ եմ անում»։

Դարձաւ, տեսաւ, որ քառամնականթ մի պղինձ գը-  
րուած է օճախի վերայ, քառասուն հորթեր էլ մէջը:  
Կօպալը մացզրեց կանթերի մէջ եւ պղինձը վերցրեց. Չուրը  
դատարկեց եւ հորթերի ոտքերն էլ մէջը թափեց, շալա-  
կեց ու գնաց:

Եկաւ ընկերի մօտ, առաւ նորան ու մնացած հօրեթերը եւ դարձաւ եկաւ գիւղը: Կանչեց հօրթերի տէրերին, աչքերը լաւ խոժոռեց նոցա վերայ եւ գոռաց. «Եթէ այս իմ եղբօր մի մատի չափ վարձը կտրէք, վայն եկել է

Ճեզ տարեց Այս պղինձն էլ ճեզ լինիւ ծախեցէք եւ թող  
Ճեր հորթերի գինը լինիւ։ Այս արից մշտազն ու առար  
շնօս որ բարձրած լուսա վասացաւ վե ամեն ոս վՍ  
ինքն էլ ջոկեց իւր հորթերն ու կեսօրին տուն եկաւ  
քեռի Թորոսին առաց. «Գնա՛, առ քսան ջորի, եւ երթանք  
այնքան ապրանք քերենք որ դու էլ ուժեաւ քո եօթը  
պորտն էլ. մինչեւ հըր ես պէտք է հորթարած մնալ»։  
Առան ջորիք ու գնացին. Գնացին մօտեցան այրին.  
քեռի Թորոսը տեսաւ որ գեւերը թափուած են այրի գը-  
ռան առաջ եւ ուսեւ են մի մի բլրի չափ. Երկիւղից իւր  
ջորին միւս ջորիներից պրծացըք ու փախաւ. Դաւիթը  
ծիծաղեց ու ձայն տուեց. «Ճնաւեր, ես գոցա տղջերից  
չփախեցայ, գու մեռեներից ի՞նչ ես փախչում»։ Քեռի  
Թորոսն ասես իսկի խո՞ւմ է նորա խօսքերին, մի բերան  
փախչում է. Դաւիթը էլի ետեւից ձայն է տալիս. «Թէ  
չես հաւատում գարձիր քո ետեւ, քարի տակ նայիր, բո-  
լորի ականջները այդ տեղ եմ թափեր»։

Դաւիթն ասաց. «Քեռի Թորոս, այս ապրանքը բալողը  
քեզ, իսկ այս անասունն ինձ. տալիս ես տուր, չես տա-  
լի՛ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»:

Նա էլ պատասխանեց. «Որդի, ապրանքն էլ քեզ լինի,  
անապունն էր, ես ի՞նչ եմ անում»:

Երբ որ քեռու բերանից խօսքն առաւ, հեծաւ քու-  
ռակի վերայ եւ քշեց մէկ այս կողմ մէկ այն կողմ (ի՞նչ  
քուռակ, նորա զօրութիւնը ոչ մէկ լեզու նկարագրել չի  
կարող): առօն առ իման բայց առ մասս դ վայդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՄ Պատմական գոշ այ  
սկզբանի ապրանքավ բնութագի ենթան Սարդ և Դաւիթն

այնուհետեւ հորթերից ձեռք վեր առաւ. Մի լաւ ըաղէ գտաւ եւ արտերն ընկաւ՝ որս անելու:

Մի օր եկաւ մի աղքատի արտի հանդիպեց, որ եօթը  
հոգուց բաղկացած մի ընտանիք ունէր, եւ միայն եօթը  
կորի կորեկ-նոցանից չորսը աւերեց, մնաց երեքը:  
Տեսնողներից մէկը եկաւ լուր բերեց աղքատ ծերու-  
նուն եւ ասաց. «Քո տունը չբանդուի, վեր կաց գնա  
արտդ տես, թէ չէ գիշերը Դաւիթը կուգայ մնացած երեք  
կորին էլ կ'աւերի»:  
Խեղճ ծերունին առաւօտեան լուսաբացից առաջ մինչեւ  
աղօթք արեց՝ վեր կացաւ գնաց, տեսաւ որ արտը վշացրել  
է: Դաւիթ էլ բազէն ձեռքին քուռակի վերայ հեծած,  
եկաւ: Այդ տեղ ծերն անիծեց Դաւիթին եւ ասաց. «Գու  
Աստծուց բնաւ չե՞ս վախենում, որ իմ կորեկի վերայ  
ես բանեցնում քո կտրճութիւնը, ես եօթը հոգի ունիմ  
պահելու եւ նոցա համար եօթը կորի կորեկ. չորսը վշաց-  
րել ես, մնացել է երեք: Եթէ իրաւ կտրիճ ես, գնա քո  
Հօր կալուածքը յետ առ, որ Ծծմակայ գլխից մկան մին-  
չեւ Սեղանօտարի գօտին է գնում եւ Մոլամէլիք գրաւել  
ուտում է: Գնա այն առ, Բնչ ես կտրիճ դառել իմ  
գլխիս: Այսպահան սկս սողութ վաճառ միջաւ  
— Սերունի, ասաց Դաւիթը, ինձ մի անիծիր, առ  
մի բուռն ոսկի եւ քո ապրուստը հոգացիք: Եւ սպանեց  
բազէին: յէ մցնալու գրցիւ բաւականաւոր յէ առ

Դա իթը նոր իմացաւ, որ ինքը շատ բանից զրկուած է եղեւ մինչեւ հիմա եւ ասաց. «Թեուի Թորոս, վեր կաց իմ» հօր գուրզն ու նետը տղւր ինձ, իմ հօր կալուածքը օտարներն ուտում են եւ դուք ինձ ոչինչ չեք ասում».

Քեռի Թորոսն ելաւ գնաց Յանվէգու մօտ, ու զեց նորա հօր գուրզն ու նետը: Յանվէգին չտուեց: Դաւիթը մի անդամ՝ էլ դարձիեց ու ասաց. «Ճալիս ես՝ տուր, չես

տալի՞ կու գամ կը մարմնեմ, գլուխդ կ'երթայ, դիսկդ  
կը մնայ»:

Յանվէգին վախից տուեց իւր հօր գուրզն ու նետը,  
եւ քեռի Թորոսը բերեց տուեց Դաւթին:

Այդ գիշեր Դափիթը քննեց մի երազ տեսաւ. Երբ որ  
գարթեցաւ, առաւ քառասուն երինջ ու գնաց ոուըր Մա-  
րաթուկայ բարձր մատուռը. Երինջները մատաղեց, շատ  
լաց եղաւ եւ երեսն 'ի վայր աղաչեց Աստծուն, Աստուած էլ  
նորան աժորը Նշան ուղարկեց (Հիմա էլ կայ այդ ս. Նշա-  
նը): Նաև համբուրեց պուրը Նշանը, դրեց աջ ծոցը պահեց,  
մի սանր էլ ձախ ծոցը պահեց:

բայս ցիվածք : «Ճ զօր ավելին . Հմ պիտի յւնի Ճ զօր  
լուսակի գո և ու կը շնէաց Եսի մայր սի ման ու ըստը

Մոլամէլիքը լսեց, որ Աբամէլիքի տղէն հասակն առել է եւ վեր է կացել գալիս է իւր վերայ կոփւ։ Իւր կողմից էլ զօրք Մողովեց եւ խօլբաշուն յանձնեց։ Սա վեր կացաւ, որ դայ Մարաթունկ Դաւթի վերայ։ Տեսաւ, որ ճանապարհի վերայ կանայք կան կանգնած, չետաքրքիր նայում են նորան եւ նորա զօրքին, նա ասաց նոցա-մւրախացէք, երգեցէք, պար եկէք մինչեւ իմ գալս։ Նոքա պատասխանեցին. «Մենք ի՞նչ ասենք եւ խա-ղանք. մենք չգիտենք ի՞նչ ուրախութիւն պէտք է տես-նենք, որ այն ասենք ու երդենք»:

Խօլբաշին ասաց. «Անպիտաններ, դուք չեք իմանում, թէ շուտով պէտք է տեսնէք իմ յաղթութեան փառքը. ահա կարծիր էլ երկէնիդ էլ սովորեցնեմ; թէ ինչպէս պէտք է գովեք ինձ, երբ ես մասսամ միասաւում».

Կարձ կը նկտիք երկանք աղան,  
Երկէն կը նկտիք ուղտեր բառնան.  
Մեր Խօլբաշին կ'երթայ Սասուն,

Ամոլ եղներ բերէ լծան, զան զի նոր որ վիտա  
կարմիր կովեր բերէ կթան.  
Կուգայ գարուն կուգայ, եւ մենք սկզբան  
իւղ ու չորթան շատ կը շինենք.

Մէկ էլ տեսպաւ, որ կանայք սկսան այդ երգել եւ  
խտղալ, իսկ ինքը առաւ զօրքն ու եկաւ մտաւ Յարա-  
թուկայքակը լցրեց:

\* \* \*  
Այդ Մարաթուկայ քահանայի աղջիկը Դաւթի Հարս-  
նացուն էր, նա եկաւ լուր բերեց Դաւթին եւ ասաց:  
«Դաւիթ, գլխիդ արեւիդ մատաղ, վեր կաց տես որքան  
զօրք է մտել բակի մէջ, անթիւ զօրք է»: Աղջիկը ասաց,  
գնաց եւ ետեւից դրան փակը քաշեց, որ ոչ ոք չիմանայ  
իւր արածը:

Դաւիթը թռաւ ելաւ եւ կանչեց. «Եա՛ հաց գինի,  
տէր կենդանի», եւ զօրքի մարդերին բռնեց, գլխները  
մարմնեց, ամենի դիակը գցեց պարսպից դուրս գլուխը  
մնաց բակի մէջ: Խօլբաշուն էլ բռնեց, նորա ատամները  
հանեց եւ շարեց ճակատին, եւ նիզակն էլ շան խառանի  
պէս շինելով՝ կախեց վկից, ինչպէս որ շան զգիցն են  
կապում եւ ասաց. «Դէհ, գնա լուր արւր Մալամէլիքին:  
թէ էլի մարդ ունի՞ թող, ժողովէ իւր կշտին, հիմա ես  
եմ գալի նորա դէմ»:

Խօլբաշին այսպէս խայտառակած էլի այն կանանց  
միջով անցաւ, որոնք իւրեանց խաղն ու խնդումը շարու-  
նակում էին: Բայց երբ որ նորան տեսան նոցանից մէկը  
վեր կացաւ եւ առաց.

«Խօլբաշի ջան, Խօլբաշի,  
Մեղնից գնացիր քանց գայլ գտղան,  
Հիմի եկար քանց շրւն վաղան,  
Վիզդ է նիզակ քանց շան խառան,

Բերանդ է բաց քանց պատուհան, զո բղություն  
Բերնիդ փրփուրն ասես թէ թան, ու նորան  
ձանձեր ունի շարան շարան: Ճան ու զարք զան  
Խօլբաշու նեղը որ եկաւ պատախանեց. չ գուք պահ  
Նորի աղջ անզգամ, լեզուդ կարիր պահանայաց  
Հէնց գիտեմ թէ Սասուն դաշտ ու դուքան էր,  
Չ'իմացայ թէ քարքարոտ ու կապան էր մարմար  
Այն տեղ մարդիկ չեն, այլ դեւի զաւակներ,  
Նետեր ունին քան ձիթհանքի գերաններ,  
Մէկ որ խփեն՝ ճեղք կը ճեղեն պատուհան:  
Ինչ մարդ տարայ, գիսի էլ եղան հոգեհան:  
Գարուն՝ որ ջուր ուռչի գառնայ մեծ հեղեղ՝  
Մեծ ու պտիկ շատ կը դողովուէ միատեղ—  
Այն ժամանակ ճեղ շատ շինէք չորթան եղ:

\* \* \*

Այժմ Դաւիթն ինքը վեր կացաւ եւ գնաց Մալամէլի-  
քի վերայ. այն ժամանակ եկաւ, երբ որ նա արդէն աշա-  
գին զօրք ժողովել նստել էր Սեղանսարի գօտու վերայ.  
զօրք բազմաթիւ սպիտակ վրանների մէջ էր զետեղուած,  
նոցա մէջ ամենից մեծն ու երեւելին մէջ տեղի կարմիր  
վրանն էր: Դաւիթն ասաց. «Ուխտ եմ դնում: որ մինչեւ  
կարմիր վրանի տակ եօթն ըրինձ վլաւ չուտեմ»: կուլ  
շաննեմ»:

Եւ այս ասեղով այդ տեղից պտտեց արեւպատի կող-  
մից համարձակ յարձակուեցաւ եկաւ եւ վրանի դէմու-  
դէմ կանգնեց: Երբ որ այն զօրքը այս ձիաւորներին տե-  
սաւ աչի մէջ բռնուեցաւ եւ վախեցաւ: Մելիքը հարցրեց.  
«Գու ինչ մարդ ես»?

Ես արեւպատոց թագաւորի տղէն եմ, ասաց Դաւ-  
իթը, ճեղ օգնելու եմ եկելու առաջ վե բժիշկը  
Մելիքը վրան զարկեց՝ եօթն օր միասին հաց կերան:

ութերորդ օրը ելաւանդաւիթն իւր ձին հեծաւ, երկու  
անգամ յետ ու առաջ չափ ձգեց, գնաց եկաւ, ասաց.  
«Վեր կաց, ես եկել եմ քեզ հետ կոխւ անելու. մինչեւ  
Երբ պէտք է իմ հօր կայուածքը ուտես»:

Մալամէիկը նոր իմացաւ, թէ ում հետ կերուխում  
արեց, գլուխը շարժեց եւ հրամայեց զօրքին, որ ոսքի  
կանգնի:

Կովիւն սկսեցին: Դաւիթն իւր կարճ աղօթքն առեց.  
«Հացն ու գինին, Տէր կեղանին»:

Այս ժամկին Թորոսն էլ հասաւ: Նա լսել է սոցա կռիւը, մէկ բարտի ծառ քոքեհան է արել: ուսին է զբել, եւ գալիս է: Եկաւ ու կանգնեց ձորի գլխին իսկ նոքա ձորի մէջ կռիւ են անում: Եթէ մէկը փախչելէ ուզում եւ վեր է բարձրանում, Դաւիթը գոռում է. «Քեռի Թո- րոս, գու ձորիք, ես ձորթիեմ»: Նատին ջարդեցին: շա- տին կտորեցին, զօրքը նուազեց:

Այս միջոցին զօրքի Աջ տրառւնջ ծագեցաւ, ոտքի կանդնեցին եւ բովսկեցին. «Եթէ գուք քաջեր էք, դուք պէտք է միայն երկուսովդ մենսումարտէք. եւ յաղթութիւնը յաղթողին լինի»:

Երկու եղբայրները համոզաւեցան այս խօսքով, տեսան  
որ մարդկանց ի զուր կոտորում են։ Եկան կանգնեցին  
մէջ տեղ. մէկն ասում է՝ «Գու նստիր, ես զարկեմ».  
միւսն ասում է՝ «ԶԵ, զու նստիր»։ Ա, երջապէս համաձայ-  
նուեցան, որ փոքր եռասոր—Դաւ կթող նստիր։

Դաւիթը քաշեց վահանը գլխի վերայ բռնեց Սուրբ Նշանը վահանի տակ ու նստեցաւ: Մալամէլիքը երեք ժամ, մի ճանապարհ հեռացաւ եւ այն տեղից շտապով եկաւ, զարկեց մի գուրզ ու ասաց. «Հող ես, հօղ գառնաս»; Իսկ Դաւիթը պատասխանեց. «Հաւատամ խոստովանիմ»;

բարձր Մարաթուկի Ա. Նշան. քեզ պէս զօրաւոր պաշտամնի տակ, ևս այնպէս եմ, իբր թէ կանաչ կարմիր վրանի տակ նստած՝ հանգիստ ըրինձ վլաւ եմ ուտում»:  
Մալամէլիքն այսպէս երեք անգամ գնաց Եկաւ զարկեց ու ասաց. «Հոգ ես, հոգ գառնաս». Դաւիթն էլ երեք անգամ իբր պատասխանեց: Յզու առ միջու այս զարկեց

Այս անգամ նստելու կարգը Մալամէլիքին եկաւ, բայց նա յամառեցաւ, կանգնեց եւ չուզեց նստել։ Բոլոր զօրքը մեղադրեց նորան թէ անօրէն է վարվում։ այնպէս որ ամօթից վերջապէս եկաւ, վահանը բռնեց գըլխին եւ նստաւ։ Այս միջոցին Մալամէլիքի մայրը Դաւթին զրպարտել ուզեց եւ ասաց։ «Դաւթ, գլխիդ արեւիդ մատաղ, չէ՞ որ դա քո եղբայրն է։ Մի զարկիր, մեղք է։ Դաւթի սիրաը շատ խոցուեցաւ եւ պատասխանեց։ «Այս անօրէն, ինչու մինչեւ հիմա չէիր ասում, թէ քո եղբայրն է, երբ սա ինձ էր զարկում։ Բայց թող քո խօսքը լինի. ես պէտք է երեք անգամ զարկէի՛ մէկ հարուածը նուիրում եմ Աստծուն, մէկը բաշխում եմ քեզ, որ նորա մայրն ես. իսկ իմ բաժին միայն երրորդը պիտի զարկեմ կամ մեռնի կամ մնայ»

Գնաց եկաւ Դաւիթն եւ իւր գուրզն այնպէս զար-  
կեց, որ Մալամէլիքին եօթն գազ գետինն իջեցրեց, եւ  
Մուտուին տիրելով՝ նստեց թագաւորական գահը:  
Դա մնաց այդ տեղ:

քաջագործութիւնները, շատ ոսկի արծաթ տուեց մէկ պշտու զի եւ ասաց «Գնա իմ գովասանքն արտ Դաւթին, ասա որ շատ իշխաններ են ու զում ինձ առնել, քայլ միայն Դաւթին եմ ընտրել, նա պէտք է լինի իմ տմուսինս գեթէ քո խաղը նորա սիրտը գրաւէ եւ նա գայ ու մենք իրար առնենք, այս ոսկին ու արծաթը քեզ վարձ լինի»:

Աշուղն առաւ իւր դամբուռ, ոսկու ածաթի լարեր քաշեց վրէն, գնաց Սասուն իւր աննման խանումի գովքը հոչակերտ: Եկաւ բարձրացաւ Յանլէ գու բերդը, կարծելով թէ Դաւթին այն տեղ է նօտած նոտաւ եւ երգեց Յանլ վէգուն խանումի գեղեցկութիւնն ու իմաստութիւնը: Յանլէ գին այս լսելով բարկացաւ եւ լւր պահապան ներին հրամայեց. «Տղէրք, վեր կացէք ծեծեցէք սորան եւ դուրս արեցէք դա եկն է, որ իմ եղբօրը խարէ տանէ:» Խեղճ աշուղին ծեծեցին եւ տարած ձգեցին ճանապարհի վերայ: Երեկոյեան հօտաղները իւրեանց եղներին հեծած՝ գիւղն էին գալիս: Անցնելով այդ տեղից, ուրա շուղն էր ձգուած, մէկի եղը լրտնեց, եւ վրայի նստողը վայր ընկաւ: Նորան որոնելով գտան եւ աշուղին: Աշուղը լաց եղաւ, աղացեց, որ օգնեն եւ հարցեց. «Այդ բերդը մօտ նստողն ով է:» Եւ նորա պատասխանեցին. «Դա յանլ վէգին է, իսկ նորա եղբայր Դաւթիթը այդ տեղ չէ, այլ Մոսուլումն է:»

Աշուղը ոսկի հանեց տուեց այդ հօտաղներին, նորա ժողովեցին նորա դամբուռի կտորտանքը, տուեցին իրան եւ ճանապարհը ցոյց տուեցին:

Աշուղը գնաց Մոսուլ եւ Խանդուդ խանումի սիրտը յայտնեց Դաւթին: Դաւթիթը երկար լսեց նորա խաղը, շատ հաւանեց խանումի գովքը, շատ պարգևեւ առեց աշուղին եւ ասաց «Դու գնա, ես կուգամ»:

Աշուղը դարձաւ, բոլորը պատմեց խանումին:

Դաւթիթը Մոսուլից ճանապարհ ընկաւ եւ ուղղակի եկաւ Սասուն եւ այն տեղից Ծծմակայ քիթ, ուր ճանապարհի վերայ մի գութան տեսաւ. արձակեց գութանի տաւարը եւ մէկ կողմ քշեց. իսկ ինքը շղթան ձեռքն առնելով նատաւ ձի: Այս կողմից քաշում էր գութանը՝ հանում էր լերան գլուխը եւ այն կողմից քաշում վայր էր բերում ցած: Եւ այսպէս Սեւ սարից գլուխ ի վայր եկաւ մինչեւ Մառնիկ գիւղի գլուխը Եկաւ աեռաւ, որ մի գոմէշ տղմից դուրս եկաւ եւ կանգնեց առաջը: Դաւթիթը, որ ամենեւին այդպիսի բան չէր տեսել գուրզը ուղղեց, որ զարկի գոմշին:

Այն կողմից մի հօտաղ դուրս եկաւ, որ գոմշին հայհում էր: Դաւթիթ կտրծելով, թէ նա իրան է հայհում ասաց. «Որդի, ես քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ հայհում եմ:

— Քեզ հետ ով է, եղբայր, պատասխանեց հօտաղը:

դու Սասույ գեերից հօ շեն, որ աշխարհը չես տեսել. ես իմ գոմշին եմ հայհում:

«Որդի, ինչու ես նեղանում: ամօթ բան է միթէ, ես այդպիսի բան չեմ տեսել. մեզանում այդպիսի բանին չեն հայհում:» Իորանից շատ կայ ձեր երկրում: Վայր ցած եւ նա ասաց. «Արի քեզ ցոյց տամ:»

Գնացին դաշտը, ուր մի գութան են չել գոմէշներով եւ քաշում են: Դաւթիթ տեսաւ, որ գոմէշները տաքից լեզուները դուրս են հանել ու գութան են քաշում: Խղճացնոց վերայ. արձակեց գոմէշներին եւ տարաւ լցրեց լիճը: իսկ մանկալն անիծեց նորան:

«Մանկալ, ասաց Դաւթիթը, ինձ մի անիծիր. այդ գութանի շղթան ինձ տուր:» Բանեց շղթան, մանկալը կանգնեց վերան եւ Դաւթիթը քաշեց գութանը ինն պտոյտ տարաւ բերաւ:

«Այդ քո հնարը չէ, ասաց մանկալը, իջիր ձիուց եւ

ապա քաշիր, տեսնենք քո շնորհքն է, թէ ձիուն»։ Դաւի-  
թը ձիուց իջաւ, տասը պոտոյտ էլ քաշեց առանց ձիու-  
նյա անգամ մաճկալն ասաց. «Իւափիթ, քեզ մատադ լի-  
նիմ. կէս օք է, նատիր հաց կեր եւ այնպէս գնա»։

— ԶԵ, Կ' ԵՐԾՄԱՄ, ԱՍԱԳ ՆԱ, ԹՈՎ ՃԵՐ ՄՊԱՅՔԸ ՀԱԳ  
ՊԼՄԵՆ, ԵԺԵ ԿԱ ՊԼՄԵԿՄ՝ ՆՈԳԱ ԷԼ ԲԱՆ ՋԻ ՄՆԱՅ:

Վերջապէս նստաւ. եւ երբ որ հաց գրեցին, Դաւիթը բոլոր հայերը ժողովեց եւ մի անդամից քասեք սրբելով՝ բերանը զբեց:

Հօտավը բերան բաց մնաց ու ասաց. «Եամսն, վեր կացէք փախէք, թէ չէ դա մարդ էլ կ'ուտէ»:

Դաւիթն ասաց. «Գութան քաշողնի հարկէ հաց կռւ-  
տի հավա ի՞նչ կ'անէ»։ Եւ այդ տեղից ճանապարհ ընկ-  
նելով գնաց Խանդուդ խանում մին։

պատօն սմբավանական պատրի և ին ամէ յժմ—  
ու ըստ ոչ զշափշա զ Եւմ օ՛ սիցեր խնամք ուր

Դաւիթը գնաց Հասաւ Խանդուղ խանումի պալատի  
գուռը. Այդ այն պալատն է, ուր որ Խանումի ուզաղ-  
ները գալիս են եւ իջեւանում են: Դռանը միշտ կանդ-  
նած է մի մարդ, որ ձեռին թոփուզ ունի: Դաւիթը հարց-  
րեց նորանից. «Այ տղայ. անունդ ի՞նչ է»:

— Եմ անունս Գորգիկ է, պատասխանեց նա:

«Գորգիզ», ես Դավիթն եմ, եկել եմ Խանդուդ՝ Խանումին ուղելու քեզ ես շատ հաւանեցի, եւ երբ որ Խանումին առնեմ, քեզ էլ ինձ քաւոր կ'անեմ»։ Գորգիզը գլուխը շարժեց եւ ասաց. «Ուրէ? որ մեր աննման Խանումը մարդ ուզէ։ շատ քաջ մարդիկ են գալիս նորաձեռքը խնդրելու, բայց ոչ որին չէ հաւանում, եւ միշտ ասումէ, թէ իմ սրտի ուղածր ուրիշն է»։

Դաւիթը հարցընց. «Դորգիզ, մ'վ կայ ներսը».

— Նըբըդան-Խորասական։ Հըմզայ-Լօռայ մեծանուն  
իշխանների հարսնախօսներն՝ \* են Եկել, ասաց Գորգիզը։  
«Իմ ձին դու քաշիր կապիք, ասաց նորան Դաւիթը։  
Գորգիզը քաշեց կապեց, առ ո՞ն մվանաւ»։ ըստը 2  
Յետոյ Դաւիթը հարցրեց «Այդ ի՞նչ թոփոմղէ, որ  
տուել են քո ձեռքդ, տուր տեսնեմ»։ Եւ ձեռքից թո-  
փուզն առնելով ձգեց, որ մինչեւ այսօր գեռ էլի անվերջ  
գնում է։ Գորգիզը նոր խմացաւ, թէ ինչ մարդու հետ է  
պատահել։ Այդիցից առ առ պատ ով յանու չ ցածր  
Դաւիթն ասաց. «Քաւոր Գորգիզ, այժմ ներս գնանք  
կեր, ու խում անենք»։ Այս մարդիկ մայթ  
Ներս գնացին, ուր որ հարսնախօսները նատած էին.  
Դաւիթը նստաւ. յոգնած է եւ քաղցած։ Այն մարդիկ  
իմանալով, թէ Դաւիթն ովէ եւ թէ ինչու է Եկել ուզե-  
ցին նորան քնացնել եւ սպանել։ Նոքա վերցնում էին մէկ  
մէկ կիմզայ գինի եւ Դաւիթն էին տալիս։ Դաւիթի ծա-  
րաւը չէր կտրվում, եւ էլ ըշհամբերելով՝ մի անգամից  
վերցրեց գինու տաշտը եւ բոլորը խմեց ու ասաց. «Դէ  
ասացէք հիմի. Անուշ եղաւ»։

նայց գինին Դաւիթի գլուխն ընկաւ եւ Դաւիթին տա-  
րաւ Երբ որ Դաւիթն այսպէս է լինում եւ գինուց գլու-  
խը խզակիցնում ու դնումէ գիտնի վիրայ, այն մար-  
գիկ հանում են իրեանց թրեըր, որ զարկեն, իսկ երբ որ  
Դաւիթը գլուխը վեր է բարձրացնում, նոքա թրեըր դնում  
են ծնկների տակ: Միանգամ էլ որ այս կրկնուեցաւ քա-  
ւոր Գորգիղը կանչեց. «Սանահայր Շաւիթ, այս տեղս  
վնասառն է, Վրաստան չէ»:  
Դաւիթն երբ որ այս լսեց, կանչեց. «Եուտ արա դուռը բռնիր»:

Բայց մինչեւ Գորգիզը \* դուռը կրփակէր, այդ մար-  
գիկն ելան փախան, մէկ մէկ տպտակ էլ տալով Գոր-  
գիզին:

Դասիթը հա թէ քնոր հանգստացաւ մարզպան ։  
Այդքան բասար չկը մել \* \* կիմսովախանակ զիմնաւոց  
։ Ենթակա ղարթեցաւ մասիթը կանչեց Գորգիվին և հիմի  
հարցրեց ։ «Խանումին ո՞ր տեղ տեսնենք» առ լրջութ  
յո ։ Ետաղպասի բախչի մէջ առաջ Գորգիվը այս օր  
կիրակի է ։ Նա այն տեղ կը լինի ։ Քաննամիշտներ նորա պու-  
ջից կը լինին եւ քսանն ետեւից ։ գնանք հեռողից տեսնելու ։  
Սովորութիւնն այնպէս էր, որ Խափիթը առաջ հօրը  
պէտք է տեսել էր, բայց նա ու Գորգիվը գնացին կապան  
պարտիզի պատին եւ կանգնեցան ։ Նաժիշտները մէկ մէկ  
եկան եւ անցան ։ եկաւ եւ Խանդուգի խանումը, Դաւիթը  
ը համբերեց մինչեւ հօր տեսութեան, ձեռքը ձգեց խա-  
նումի զին ։ Երեք համբոյը առաջ նորանից ։ Խանումը  
այս անգամ ոչինչ ըլխուեցաւ, գիտէր որ իւր Դաւիթն  
է ։ Բայց Դաւիթը չորրորդեց համբոյը ։ այս անգամ Խան-  
դուգը բռնեց Դաւիթի փողպատը զարկեց նորան պատին,  
եւ Դաւիթի թթից արիւն վագեց ։ Հայութը դժ սաս  
։ Դաւիթը ամեն տեսակ ցաւի կտկիծը կը տանէր, բայց  
նորա սիրաը շատ խոցուեցաւ, որ մէկ կին այսպէս ան-  
պատիւ արեց իւրեան ։ Սամտիկ բարկացաւ եւ այդ տեղից  
դարձաւ որ ձի նստէ, ու խտեց իւր ս ։ Նշանին եւ ասաց  
Ժաւոր Գորգիվ, քաշիր ձիս, որ այս քաղաքն աւերեմ ։  
Գորգիվը աղաչելով ասաց ։ «Սատուած սիրես, հիմն  
թող մնայ, մութնէ ։ լուսին վեր կաց աւերիր գնա ։  
Դաւիթը թէեւ համբերեց, բայց մահձի մէջ պառկած  
ժամանակ բարկութիւնից չի կարողանում քնել ։ սպա-  
սում է, թէ ե՞րբ պէտք է լուսանայ, որ այս քաղաքը աւե-  
րէ եւ գնայ ։ այս ուսումնական գիտութիւնները  
ունեն գրաւութիւն ։ Այս գրաւութիւնը այս ունենալու առաջ  
- իսկ Խանդուգի խանումը դեռ էլի պարտիզի մէջ զրու-  
նում էր ։ կադ նաժիշտն եկաւ եւ ասաց ։ «Ի՞նչ սեւ ժաւ

մինեւազրունում՝ ահա Դաւիթը պատրաստվում է քրողապական քաղաքն աւերել եւ գնալ»:  
Գնացին հագնուեցան բավեցին իւրեանց բռիչեն, քող ծածկեցին եւ գարձան։ Եւ ուղղակի եկան իջեւանի դուռը ծեծեցին, որ բանան։ բանք վեց բանք ուան Դաւիթն որ նոր անոյշ քուն էր մոել ասաց «ՈՇ, ուհի ինչ անամօթ են այս քաղաքացիք, մինչեւ առաջոտ չեն համբերում, ասում են ել աւիրիր եւ գնալ։  
Դորգիզը դուրս եկաւ ահով պաշտպամը բայց երբ որ եկողներին տեսացաւ հանդարտուեցաւ եւ ասաց «Եկողներից վնաս քրկայ, նոքա քոսա են, պօքերով չեն»։ Դաւիթը համկացաւ, որ եկողները կանայք են։ Դուռը բացին։ Խանդուդը եկաւ իւր նաժիշտներով Դաւիթի մօտ եւ խօսեցաւ. «Դաւիթ, ասում են որ դու բարկացել ես իմ վերայ, որ ես քեզ անպատուեցի։ Բայց գիտե՞ս, թէ ինչու անպատուեցի։ Դաւիթ, դու ինձանից մի համբոյր առար ուխտած ճանապարհիդ համար, մէկն էլ առար քեզ համար, որ կտրին ես, երկրորդն էլ՝ Ապտուծոյ սիրոյն համար։ Աւելի պագը ինչ բանի համար առար, եթէ դու քո հօր կտրիմն ես, ես էլ իմ հօր կտրիմն եմ։ Ասած է. աղջկան ազատիր եղիդների ձեռքիցն» որ տղին ասեմ։ թէ տղայ մարդ է։ Դու որ ինձանից աւելի պագ ես առնում, միթէ Նըրըդան-Խորասական Խօսայ Հըմզայ հսկաների գլուխը արգեն բերել ես ինձ, որոնց հարսնախօսները միշտ գալիս են մեր տունը եւ Ճանձրացնում են ինձ։  
Դաւիթը այս խօսքերից կակլեցաւ եւ ասաց «Եթէ այդպէս է, լուսին ես կ'երթամ նոցա գլուխը կը բերեմ քեզ ես ասացի եւ կ'երթամ։ բայց եթէ բաղդս այնպէս կտրէ, որ նոքա ինձ յաղթեն եւ սպանեն, դու եթէ սիրում ես քս Աստծուն՝ արի իմ դիակը փնտուիր, աջ թե իտ վերայ կայ մի մոէ խաչ այս նշանով ճանաչիր, վեր առ,

բեր թաղիր, բայց մի թող որ նոքա այն տեղ անպատճեն մարմինս».

Դաւիթը գնաց ճանապարհ ընկաւ բայց միշտ վկանաց մայմ մայմ մայմ:

Նատ գնաց, քիչ գնաց, այն հսկաների աշխարհը ին մօտեցաւ: Հսկաները տեսան, որ այն տեղից մի ձիաւոր է գալիս ձիաւորի թողը երկինք է համուռմ: Ասացին. «Եյդ ձիաւորը կռուի համար է գալիս, միայն թէ չը լինի, որ գա Արգոյի ճորտերիցն է»:

Երբ որ ձիաւորը մօտեցաւ, նոքա կանչեցին: «Այ մարդ մվ ես դու եւ ո՞ր տեղիցն ես գալիս»: Նա պատասխան չի տուց եւ էլի մօտեցաւ: Նոքա էլի հարցուցին. «Արգեօք Խանդուդ խանումին չե՞ս ճանաջում, չե՞ս կարող այս մատանին նորան հասցնել»:

— Եւ ճանաջում եմ՝ պատասխանեց Դաւիթը, բայց ես ոչ թէ ձեր մատանին տանելու եմ եկել, այլ ձեր գլխ ները պէտք է տանեմ նորան: Եւ դարձաման ժառայր:

Դաւիթը տեսաւ ինչ հրէ ջներ տեսաւ, այդ Շըրըդան Խորասականի վերին ունքը այնքան էր կախուել, որ նեկել հասել էր սրտի վերայ, ուստի եւ չանգալովի տարել էր թիկունքի վերայ կապել իսկ միւս հսկայի և օռայ-Շըրըդի ներքեւի շուրթը գետինն էր աւելում:

Դաւիթն ու այդ երկու հրէ ջները իրար առան գուրզ ու վահանով եւ կռուեցին մի օր մինչեւ երեկոյ: Դաւիթը կանչեց. «Եա, հաւատամ խոստվանիմ ով բարձր Մարդուկի սուրբ նշան, Ցիսուս որդիւ դու օգնական», եւ զարկելով երկուսի գլխներն եւս կտրեց իւրեանց մազերով մէկմէկուն կտպեց եւ խօսրվինի նման ձիու գալաշ կին ձգեց. իսկ նացա կախ ընկած լեզուները գետինը վարում էին, կարծես գութանը ակօներ է քաշելու նոյն Այդպէս գլուխները լիրելով, ճանապարհի կէսն եւ-

կաւ: Տեսաւ, որ գիմացի կողմից մի ձիաւոր է գալիս երկնքի եւ գետնի մէջ կրակ թափելով, եւ ձայն տուեց Դաւիթին. «Է՞յ, քանի դիու ժամանակ ունիսա պատրաստուիր. մոքիդ չանցնես, թէ այժմ Շըրըդան-Խորասական, Լոռայ Հըմզայ հրկաների պէտին ես պատահել»: Ասաց եւ անցաւ Դաւիթի թիկնակողմն ու մի գուրզ զարկեց: Դաւիթը ճարպիկութեամբ ծռուեցաւ, մի ոտքը հանեց ասպանդակից, գուրզը դիպաւ ձիու ասպանդակին առաւ տարաւ գետին:

Դաւիթը մէկ անգամ էլ շիտկեցաւ թամբի վերայ տապաց, «Եա հացն ու գինի, Տէր կենդանի»: Գուրզը տարաւ, որ գլխին տայ, բայց գիմացի կոռուզը կուչ եկաւ եւ ծամերը թափեց նորա առաջ ու այս բայ մարտ դաւանդ Դաւիթը տեսաւ եւ ճանաչեց որ Խանդուդ խանումն էր, որ մարդի պէտ վոխուած գուրս էր եկել նորա գէմ: Դաւիթն ասաց. «Այ չար անզգամ, սիրտս ասում է որ մի գուրզ զարկեմ, քեզ գետնի տակ տանեմ. երկրորդանգամն է, որ ինձ խայտառակում եմ»:

Բայց Դաւիթն այն Դաւիթն էր, Խանդուդն էլ իւր միրած խանումն էր: Մէկ մէկի առան եւ դարձան եկան Խանդուդի քաղաքը. կանչեցին Խանդուդի հօրը, եւ Դաւիթն ասաց. «Քո աղջիկը չե՞ս պալ ինձ»:

Հայրն ասաց. «Թէ կ'առնես եւ կը մնաս այստեղ, կը տամ. իսկ թէ պիտի առնես գնաս, չեմ տալ»:

— Կ'առնեմ, կը մնամ \*այս տեղ եւ չեմ տանիլ, ասաց Դաւիթը:

Այս խօսքը երբ որ առան բերեցին առուեցին նոցալ պատկըն արեցին ու կօթն օր կօթն գիշեր հարսնիք կատարեցին: Իւսու դու այլը շզարտուած առա մինաւայ քարտաւ և բան միս ու լուս բլոց մզզմանախաքա զի մռասն չմօտ չցիմազա:

սիյաբ և զուարէ վի ըշեք Բ։ մբանեիր դո առանձ առք  
ըմառ միտու աւ. խոյժանի բաղը ջն խմաք աւ վցիզգ  
ասպարանիքից միաժամանակներ պնդու, Աստուածանո-  
ցամի տղայ՝ տուեց: Ենելս չեն առմբուաց դիման դիւու  
Դաւիթը տանը չերք երք տիմարան իմաց արին՝ այնպէս  
ուրախացաւ, որ չէր էլ ու զոււմ հաւատար թէ այդպէս  
բախտաւորուել է: Եկաւեւ Խանդուդ խանումին ասաց.  
«Թէ որ այդ տղան իմն է», նորա վերայ մի նշան մի զօ-  
րութիւն պիտի լինի»: Ասաց եւ գնաց միւչեւ որ պատա-  
խան տանեն նորան: Խայց յէ նորան վի զնիւար  
աւս Եկրեցին տղային խանձարուը գրեցին եւ կապերի վոխ-  
նակ գութանի շվիթայուի փաթաթեցին տղայի վերայ: Երբ  
որ տղան լաց եղաւ եւ ձգձգուեցաւ որօրոցի մէջ, նորա  
վերայի շղթան կտոր կտոր եղաւ: Պատասխան գնաց Դաւ-  
թին՝ թէ տղան լաւ տղայ էն շղթան կտրտեց. միայն մի  
ձեռքը արատաւոր է խուփարած է, եւ ոչ ոք չի կարո-  
դանում բանալ նորա ձեռքը: Նորա զնուր վի զն չ

Եկաւ Դաւիթը, նստեց եւ մտնկան ձեռքը այնքան մա-  
ժեց, մինչեւ որ բացեց. տեսաւ որ ձեռքի մէջ արեան նիշ  
կար, ասաց. «Հայ, Հայ, աշխարհը մի կաթիլ արին է արել  
դրել իւր ձեռքի մէջ եթէ դա ողջ մնայ զարմանալի բա-  
ներ պիտի դուրս գայ դորանից:»

Եկրեցին կնքեցին եւ անունը գրեցին Սհեր:

աւաս նու առաջ սմբառ փոխի ՀԱ իսի. Նուս  
ըստ ըմբառ նու ու բան սկա \* նունկը: Նուս ու ն

Անցաւ մի ժամանակ, տղան մեծացաւ: Դաւիթը թո-  
ղեց տղային նալզուան իւր պատի եւ մեծի մօտ, իսկ ինքը  
Խանդուդ խանումին առաւ ճանապարհ ընկաւ, որ տանի  
Սասուն իւր ազգականներին ցոյց տայ, եւ այն տեղ էլ  
հարսանիքը տօնէ:

Բայց ճանապարհին շատ թշնամի աղգեր կային նոցա  
հետ պէտք է կռուէին: Այսպէս օրինակ Խաթցիք գորք  
ժողովեցին ու պարիսպ կապեցին Դաւիթի գէմ եւ սայլե-  
տի մտգարիս (պատուար) շինեցին կռիւ սկսեցին: Բայց  
միայն Դաւիթը չէր նոցա գէմ, Խանդուդ խանումին էլ մի  
տղայ մարդ էր կռիւ մէջ: Խանդուդը մզրախի կոթով զար-  
կում էր պարիսպը բանդում էր, եւ սայլերը ձգում էր  
երկու ժամ ճանապարհի հեռաւորութեամբ. իսկ Դաւիթը  
կոտորում էր զօրքը եւ գնում էր առաջ:

Դաւիթը դարցաւ ասաց. «Խաթցիք, գուք ի՞նչ ան-  
պատկառ մարդ էք, որ մի հարսի գէմ էք կռիւմ: թէ  
սպատիւ կայ ձեր մէջ՝ թողէք հարսս տանեմ Սասուն, յե-  
տոյ գամ եւ կռուենք:

Նոքա թէ եւ ամաչեցան, բայց ըլ Հաւատացին: «Որ  
այդպէս է, ասացին, ուրեմն երդուիր քո ծոցի Սուրբ  
Խշանով, որ Հաւատանք»: Դաւիթն էլ ձեռքը տարաւ, որ  
իւր խելքով սանդրի վերայ պիտի գնէր ու երդուէր, բայց  
ձեռքը դիպաւ, Սուրբ Խշանին: Սուրբ Խշանի հնար  
ու զօրութիւնն էլ այն էր, որ նորանով երբէք ըլ պէտք է  
երդուել էր:

Խաթցիք ճանապարհ տօւին, Դաւիթն առաւ Խան-  
դուդին ու տարաւ Սասուն բերգը:

Ծեռքը տարաւ ծոցը եւ տեսաւ, որ Սուրբ Խշանն էր  
ընկել այն կողմ, որի վերայ ինքը երդուել էր եւ ասաց.  
«Այսուհետեւ իմ բանը ածուկ չէ: թէ գնամ՝ զուր է,  
եւ թէ չգնամ՝ զարձեալ զուր է: Բայց որ երդուել եմ,  
պիտի գնամ»:

\* \*

Վեր կացաւ եկաւ կռիւ անելու: Կռիւն սկսեց, բայց  
Խաթցիք նորան նեղը լծեցին, նորա ձին խրուեցաւ մի  
շամբի տղմերի մէջ. Հաղիւ հաղ այդ տէմից աղատուե-

լով՝ եկաւ ջրի մէջ լուացուելու, որ ցեխից մաքրուի:  
Այդ ջրի ափի փշերի մէջ մի չար աղջիկ էր կենում,  
որ ամէն լողացողի վերայ նետ էր արձակում եւ սպանում:  
Երբ որ Դաւթիթն էլ միամիտ լողանում էր, աղջիկը դար-  
անամուտ եղած մի նետ զարկեց նորա թիկաւնին: Դաւ-  
թիթն զգաց, որ այս զարկը մահաբեր է, կանգնեց գուաց,  
ձայնը հառաւ Սասուն: Դաւթիթի ձայնը լսելով՝ Սասունոյ մէջ մէկ տեղ ժողովեցան  
Զէնով Ովանը, Խոր Գուսանը, քեռի Թորսար, Ճնճղափոք-  
րիկը, Յանվէգին: Զէնով Ովանը Սասունից կանչեց: «Դաւթիթ,  
մենք գալիս ենք: Եւ շտապով եկան Դաւթիթի օգնութեան:  
որ արդէն ջրի մէջ լսել էր իւր եղբօր ձայնը: Նոքա հա-  
սան ջրի մօտ եւ գտան Դաւթին:»  
«Զէնով Ովան, ասաց Դաւթիթը ինձ վիրաւորովը մեր  
գոռալու ձայնն առնելով, անշուշտ երկիւղից կիսակենդան  
ընկած կը լինի. գնացեք նորան գտէք, նորա դատա-  
անն էլ առնեմ, այնպէս մեռնեմ»:  
Փնտռեցին գտան, որ մէկ չինի աչքեր աղջիկ է:  
Դաւթիթը դորա ստը ստի վերայ դրեց: Քայեց ճըւտեց,  
Երբ որ այդ հրէշ աղջիկն էլ չկար, մարդիկ եկան այդ  
կողմերը գիւղ շինեցին, անունը դրին ճըւտիս: Ճըւտիսն  
էլ յետոյ դառաւ ձապկիս, եւ այդ գիւղը այդ անդնով  
մինչեւ այս օր կայ:

Դաւիթն իւր սպանողին սպանեց, բայց ինքն էլ մահու էր  
մօտենում։ Եղբայրներն ու քեռվին առան Դաւթին գնացին  
Սասուն։ չորս օրից յետոյ Դաւիթը մեռաւ

«ՀԵՅ»: «Դաւթից յետոյ՝ ես սոցա ձեռքին պէտք է նայեմ  
եւ սոցա առակը պէտք է լինիմ»:  
- Եղբայրներն եկան մէկ մէկ ասացին:  
- Անհեղության վանդուդ խանում՝ քո սեւ սուգը մի հագնիր:  
Դաւթիթ մեռաւ, ես փոխարէն. ողջ զիր:  
- Խանուդուդը երբ որ այս լսեց ասաց. «Գնացէք դուրս,  
իմ պատասխանն այն տեղից դուք կը լիէք»: Անոքա դուրս  
գնացին, իջան ներքեւ, իսկ ինքը վեր ելաւ բերդի գլուխը,  
եւ այն տեղից մազերը վիետելով՝ գետինը գլութեց իրան:—  
Նորա գլուխը դիպաւ մի քարի եւ ծակեց նորան այդ  
քարի մէջ լցնում են Սասնոյ կէս չափ կորեկ եւ ծեծում  
են, սանդի տեղ. Խանուդի եօթնաձիւղ ծամի տեղը դեռ  
մինչեւ այս օր երեւում է, եւ այժմ էլայդ սանդը այն  
տեղ է բերդի առաջ

**Թ.** այս բարեկան է մատուցած աշխարհ ու աշխարհա-  
բան պատճեն ունի ըստ այս պատճենագրածոց զան ռազմական  
չաւաքուեցան Դաւթի եղբարքը Խանդուգ իսանումի  
վերայ, ձեռ տուեցին ծծերին, տեսան որ կաթ կար, ըստ  
որում երեխայ կար:

Ժողովեցան միասին եւ ասացին. «Դուցէ ինչ որ եղել է, այն տեղ է եղել» . եւ գնացին հասան կաղզուան եւ տեղի նըստողին ասացին. «Մեր եղբօթու հարսի այս տեղ երեխայ կայ ուր է» :

— Ոչինչ չկայ, նոքա պատասխանեցին: «Մեզ նշան կայ, ասացին Թագթի եղբարքը, մեր հարսիք ծծերում կաթ կտր:»

— Մի աղջիկ է եղել նորանից եւ մեռել է, պատասխանեցին միւսները։ Բայց սուտ էին ամոււմ իւրեանք գետնի տակին մի այր էին փորել, Մհերին՝ դրել էին այդ այրի մէջ, եւ նորա վերայ պահապան։

